այնքան, որքան նրան հասնում է հողի կամ հարկերի բաշխման համար ընդունված սովորույթի հիման վրա. հակառակ դեպքում հասարակությունը իրավունք ունի իր հայեցողությամբ հոր հողերից կտրել և այդ կտորը տալ բաժանված որդու օգտագործմանը։

«Եթե բաժանված որդին հոր կենդանության օրով չէր ստացել անշարժ գույքից իր լիակատար բաժինը, նա իրավունք ունի այդ ստանալու հոր մահից հետո, սակայն շարժական գույքից նա ոչինչ չի ստանում։ Սա մնում է եղբայրներին, որոնք ապրել են հոր հետ նրա կենդանության օրով»։

«Եթե բաժանված եղբայրները կրկին միանում են և մեկ տնտեսություն են կազմում, մի բան, որ հաճախ էր պատահում, երբ հորեղբոր որդիք որբ էին մնում, երկրորդ անգամ բաժանվելիս բաժանման էր ենթարկվում միայն այն, ինչ որ նրանք ձեռք են բերել միասին ապրելու միջոցին»։

Հայկական օջախն այսպիսով բաժան-բաժան էր լինում։ Զանգեզուրում էլ, ինչպես վերը շեշտեցի, ժողովրդական բարբառի մեջ տօնմ, գէրդաստան, ընտանիք բառերը փոխարինված են օջախ, տօն, ծուխ բառերով։ Ձեն ասում մեր ընտանիքը մեծ է, այլ մէր օջախը, մէր տօնը մէծ ա, մեր օջախում, մեր տանը այսքան տղամարդ ու կինարմատ կա։ Ընտանիքի միասնության գաղափարը շաղկապված էր ընդհանուր տան և ընդհանուր կրակի հետ։ Երբ մեկը բաժանվում էր և իր համար շինում էր առանձին տուն, տան մեծն էր վառում նոր տան մեջ կրակը իրենց տանից բերած կրակով։ Սրանով շեշտվում էր, որ թեև նրանք բաժանվել են, բայց օջախի ամբողջությունը պահպանվում է, արյունակցական, ազգակցական շաղկապը մնում է։ Այդ ամբողջությունը և միասնությունը դրսևորվում էր տակավին երկար ժամանակ նրանց հաջորդ տնտեսական և կենցաղային փոխհարաբերությունների մեջ։ Եղբայրների մեջ ավագության կարգի վրա հիմնված հարգանքն ու պատկառանքը չէին դադարում նաև բաժանվելուց հետո։

Ընտանեկան կազմը, առավելապես այն դեպքերում, երբ ժառանգ չէր լինում, լրացվում էր որդեգրությամբ, որին օրինական ձև էր տրվում գյուղի համայնքի գիտությամբ։ Որդեգրածը վայելում էր հարազատ զավակի բոլոր իրավունքները և կապվում էր ընտանիքի հետ նույն պարտականություններով։ Նրան անցնում էին և մեռած սեփականատիրոջ հողաբաժինները, նույնիսկ եթե նա չէր եղած նույն հասարակության անդամ։ Որդեգրվում էր ոչ միայն տղա, այլև աղջիկ անհատը։ Երկու դեպքերումն էլ որդեգրածը չէր կարող ամուսնանալ ընտանիքի որևէ անդամի հետ։ Նա դառնում էր ընտանիքի հարազատ, արյունակից զավակ։ Մի այլ ձևի հարաբերություններ, որոնք շատ են հիշեցնում հարազատ արյունակից հարաբերությունները, հաստատվում էին իրարից արյունով հեռու երիտասարդների միջև, դաղօ կոչվող ինստիտուտով։ Այդ միջոցով ավելի հաճախ իրար հարազատացվում էին աղջիկները։ Այն աղջիկները, որոնք կամենում էին քուրանալ, նախ ուղարկում էին իրար խօնշանէր և ապա Զատիկ օրը գնում էին եկեղեցի և զույգ-զույգ կանգնում էին սեղանի առջև՝ վառած մոմերը ձեռներին, այնուհետև զույգ-զույգ մոտենում էին սուրբ սեղանին, Ավետարանը համբուրում, խաչհամբույր ձգում, քահանան էլ իր օրհնություններն էր տալիս։ Այնուհետև այդ զույգերը քույրերից ավելի մտերիմ էին դառնում, իրար նկատմամբ դաղօ-ներ էին կոչվում, փոխադարձաբար օգնում էին, միասին գնում էին ջրի, միասին գնում էին լողանալու կամ զբոսնելու կամ ուխտ։ Կիրակի առավոտյան աղջիկները մթնով

15—690